արել այս անգամ։ Նա քարոզում՝ յորդորում է իւր ընթերցողին արհամարհել, ունկնդիր չը լինել ինձ... գեղեցիկ միտք, քարոզութիւն վայել է մի խմբագրի հոգւոյն եւ ուղղութեան։

Ամենքը խոստովանվում են որ՝ հայրենիքը իմաստասիրված չէ՝ ուսումնասիրելը անհրաժեշտ է՝ երկու տարի է որ այդ խօսքերը ձանձրանալու չափ լսվեց. եթէ գիտնականները չեն կատարում այդ պահանջը՝ ինչի՞ մեզ (տգէտներին) արգելել։ Դա նշանակում է որ «դուք չէք մտնում եւ որոնք մտնում են՝ թոյլ չէք տալիս»։

Արժէր ասում է «Մեղուն» 5½ հայ ունեցող Մագուն ուշադրութեան առարկայ չինել։ Ես հարցնում եմ՝ ժամանակի պահանջմանց համապատասխանն էր Սխականի ուսումնասիրութիւնն։ Զգայ խմբագրութիւնը որ՝ դա ոչ օքին չը հետաքրքրեց եւ ինքը միայն մնաց իւր պաշտպանած առաջարկութեան հետ։

Խմբագրութիւնը պաշտպանում է նաեւ վարժապետներին որոնց շարքին՝ համբերութեան համար երեւի՝ ինձ էլ իւր շնորհն է անում։ Ինչի՞ նա այդպէս նեղ է հաս-